

ՇԱՐՄԱՆ

R. P. Kalémearian, Mechitharistengasse
(Autriche) W. 4.
Vienna

«ՇԱՐՄԱՆ» Ի ԲԱԺԱՆՈՐԻ ԿՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՂԻՆԸ ՊԷՏՐ Է ԿԱՆԵՐԿ ՎՃԱՐԷ

ԵՐՈՊԱՅԻ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան չորրորդ զօրաբանակին պատերազմական վիճակի մէջ գրուելը, որ յայտարարուեցաւ ու վերջը պաշտօնապէս հերքուեցաւ, այդ հերքումը իսկ պրեթէ իրողութիւնը կը հաստատէր, այսօր հաստատուած է, իրատեսիլ մը ընտրեցնելու բազմաթիւ վաշտեր զէնքի կը կոչուին, կը պատահի որ իրատեսիլը չեն իրագործուիր, բայց անոնք որոնք կը տրուին կոտորածներ պատրաստելու և զլուխ բերելու մար, միշտ իրենց ազգեցութիւնը կոչուեն իրողին, որովհետեւ տէրը անուշագիր չի մընար անոնց գործադրման մասին և մանրակրկիտօրէն ու հաւաքական սպանութիւններու մանեաքի եռանդով և կասկածոտ անհամբերութեամբ կը հսկէ, իմիջի ալլոց ան գիտէ որ Երզնկայի և Բիթլիզի մէջ ունի վտահալի ծառաներ, Ձեքի, փաշան և Թէրիտը ասա տարիէ ի վեր փաստեր տուած են, Բայց շնորհի սպանալիքը այսօր ուրիշ տեղերու վրայ կը տարածուի, բացի Սասունէն, Մուշէն և Ռուսիոյ և Պարսկաստանի սահմանակից վայրերէն սկսել են սպանել Սեբաստիոյ նահանգին մէջ և արդէն քիւրտերը աշխատեր են Րամզայի մէջ:

Առաջին հնագիտները կըսեն թէ մանրամասնութիւնները կը գալսին, Բայց այնտեղ, ինչպէս վան, նախագէտները կան, վերջիվերջով 1895ի սուերոտած կոտորածները, որոնք վերաբացուեցան զեսսանատներու միջոցաւ, նոյնմբերի սկիզբէն Տրապիզոնի վիլայէթի թափառական քիւրտերը խուժեցին Սեբաստիոյ գաւառը, նոյնմբեր 12 ին Սեբաստիոյ մէջ 1500 մարդ սպանուեցաւ, նոյն թուականին կուրուս պաշարուեցաւ, մինչև 28ը նոյն ամսի, 1200 գիակներ զեռ փողոցներուն մէջ կը

գտնուէին: Հոկտեմբեր 27էն մինչև նոյեմբեր 5ը Գայի Գարահիսարի գաւառը աւերուեցաւ (3000 մարդէն աւելի սպանուածներ և 30 զիւր աւերուած կային), Եմասիոյ մէջ նոյնմբ. 18 26 մօտ 1000 մարդ կաք սպանուած, պաշտօնական հազարագրութիւնները 80 կը խոստովանին, թէ Եմաշիլ Իրմակը հազի սալլով տարւած էր բազմաթիւ գիակներ:

Եթէ Համիտի կոտորածները Սասունի մէջ տաս տարի սպանեց նոր ողջակիցումներով տօնելու առաջին կոտորածներու տարեգարձը, կարելի է որ աւելի կշտապէ գործել Սեբաստիոյ մէջ և ուրիշ տեղեր և Գ տարուան մասանակաժիջօցը, բաւական երկար կը գտնայ վճռողապէս, որ Երոպան մտացած ըլլայ և իրեն թօյլ տայ վերսկսելու արիւնտտունը:

Չի երեւիր, իսկապէս, որ Պերլինի գաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները գործելու շուտ շտապին, թէ Եմաշիլ արարուած է մօտերս տեղի ունեցած Սասունի կոտորումներով: Սակայն տագնապող հայերը աւելի լաւը կսպասէին, ամենէն քիչը գոնէ ունէ մէկէն, Ոչ միայն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը մէկ քանի անգամ խոստովանեցաւ անոնց բողոքին հիմնաւոր ըլլալը և անոնց տուած հակախտութիւններուն օգինաւորութիւնը բայց և Լօնարայի մէջ տեղի ունեցած ժողովին երկրորդ օրը պաշտօնական ապահովացումներ եղան որոնք բարենորոգումներուն մօտաւորութիւնը իսկ կը շօշափէին:

Անգլիոյ մէջ լրբա Լանտագուսն աւելի համակիր կը գտնուէր քան իր օգնականը, կոմս Բերսին, զէպի անհրաժեշտ գործողութիւնը: Ու եթէ նախարարապետ Պալիուր գառնային քննչութիւն մը կը բանեցնէր, ան չը պիտի կրնար ուրանալ իր հարազատ վարդապետութիւնները, որ 1896ի յունվար 15ին Մանչեսթրի մէջ այսպէս կը ցուցադրէր: «Իր-

րիտանական կայսրութիւնը 17րդ դարու Ինսպանեան չէ, տագնապող նաւ մը պարկած ջուրերուն վրայ, որ ծովահէնները կը հրապուրէր, և չէր կրնար զանոնք ետ մղել: Ոչ պարտնեք, այս երկրին անցած պատմութեանը մէջ չը կայ վայրկեան մը, որ Իրիտանական կայսրութիւնը պատերազմի աւելի լուս մեքենայ մը ըլլար, քան այսօր է... Սակայն էս պարտաւոր եմ վշտաբեկ և սրտիս հակառակ խոստովանել թէ Եմաշիլ ան ստիպել բարենորոգել իր վարչութիւնը, առանց որու անկարելի է յուսալ որ կարելի պիտի ըլլայ անորոշ մամանակով ու շացնել Արեւելեան հարցին վերաբացումը»:

Պ. Պալիուր ան ատեն նախարարապետ չէր, այսօր Բրիտանիոյ քաղաքականութեան պատասխանատուն է, և պարտաւոր է այդ քաղաքականութիւնը ցաւալով և հակառակ սրտի դատել մանաւ մնալ գիտնալով որ ան հակառակ է անգլիական բոլոր կուսակցութիւններու պայցումներուն:

Բ. ԳԻՍՐ
(Բրո Արմենիա)
(Շարունակելի)

ԿՐԿԻՆ ԴՈՒՏԵՐԸ

Յաճախ բնական դուռցած է գորտերու տղմկայից ձայները լսել երբ արդէն արեգակը տակաւ իր լոյսը կրկնի կորսնցունել, որուն պիտի յաջորդէ մութ և մռայլ գիշերը, ահայն մամանակ է որ ամբողջ ցորեկ մը արեւին կիզիչ ճառագայթին տակ գորտը իր աչքերը գորս արեւկամ, հոտած ճակիճին մէջ կը տապալակէր, ու երբ մթութիւնը վրայ կը հասնի յանկարծ գործը կսկսի, իր բաւտենական հանգրգը—կուկոցը—մինչև ճաթիլու ճաթոտելու աստիճան: Ասոր յար և նման է Ամերիկայի վեր-Չնչ, խմբակին օրկան եղող Ձայն-ը, Սասունի և անոր չըջանալի հերոսական կոխները անտես բնելով, կամ այն է որ քաջամարտիկներու հրացանին ծուխը կուրացուցած է իրենց աչքերը, կարծելով թէ խաւարը, սկսեցին իրենց յատուկ և սա-

վորական հանգրգը: Իմ նպատակ չէ գտնանող գորտերը համոզել քանի որ իրենց գործին չգար ատ, եթէ գազան Սուլթանը համոզուի գործերու խմբակն ալ կը համոզուի, Որովհետեւ եթէ չսենք Թրքո-Հնչակեան դաշնակցութիւն, գոնէ գիտնալ թէ որոնք են Սուլթանի վարձկան գործակատարները, ինչ իրողութիւնները խօսին թէ իրենց խօսքով և թէ իրենց գործով: Առաջին, ինչ է իրենց գոյութիւնը, չէ որ Սուլթանին պատճառ և պատրուակ պիտի է հայերը ջնջելու և ջարդելու: Իրենց խօսքով, եթէ «Ինչնակցականներն են որ կը գողանն Սուլթանը» միթէ՞ իրենց գոյութիւնովը, նուազ կը գողուի Սուլթանը, Երկրորդ եթէ Դաշնակցականներն են որ թիթի վրայ ապստամբեցուցին Սասունը» հարկ կար եւս աւելի գողուի Սուլթանը: «Հնչակեան սպանական նօթայով Պոլսոյ զեսսաններու վրայ խոր տպաւորութիւն թողնելով» և անոր իբր հետեւանք ու արդիւնք հարիւրաւոր խեղճ ու թշուառ հայերու աքսորումը Պոլսէն, իրենց խօսքով ինչու գողացին թիւրքը թիթի կեղծ քապանալիքով, Միթէ այսպիսի էր ձեր պաղանի գործունէութեան տեսողական և բնականուր ապստամբութիւնն առաջին միջոցը, չէ գերանը որ մտած է ձեր աչքերուն մէջ, անգոր էք տեսնելու ուրիշին աչքին շիւղը՝ եթէ երբէք գոյութիւն ունենայ: Երրորդ, ինչ էին գլուխ գործոց կեղծ միութիւն գոռում գոչումի վերջները Երկրորդէն մինչև Ամերիկայ, ինչ էին կեղծ սպանալիքները Օրմանեանին, միթէ՞ ասոնք «խոհմուտութիւն ու լուրջ գործունէութիւն» են, միթէ՞ թիւրքը չեն գողուէր փառաւոր ջարդ մը տալու: Չէ սփիսաններ մի կարծէք թէ մենք որ երբեմն կարեւորութիւն կուտանք ձեր կողմոցին, մենք պիտի ետ կենանք մեր գործերէն, ընդհակառակը, ազգային դատը նուիրական է մեզ համար և անոր ինկած գրօջակը պաշտել, որուն տակ համախրմբուած պիտի շարունակենք անհաւասար կռիւր ներքին և արտաքին թշնամիին դէմ: Գոնէ երկու խօսք ալ Բրո-Արմենիա-ին մասին ըսենք: Չկա անկեղծ և ճշմարիտ ազգապէր հայ մը որ ուրանայ անոր բրած օգտակար ծառայութիւնները ինչպատ հայուն, քան մը որ Սուլթանի աչքին փուշը եղած է, որ հայկական դատին այնքան պիտի փակած անխոնջ աշխատութեամբ մը կուզէ ատալ ասնիլ, իսկ ասորին իրենք զիրենք յեղափոխական (եթէ մեզք չգործեցի) յորջորդ խա-

բայրը իրարու հետ կը մրցին վա-
տու թիւները վրանին գիղելու եւ
իրենց չարահամբաւ կաւատութիւնը
հոս օտարներուն ալ ծանօթացնելու :
Չեմ գիտեր պիտի սղդէ այս խայտա-
ռակներու վրայ աւ հրապարակային
խայտառակութիւնը . թէ ..
Սարսուփ

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԶԵՐՄԱՆԱԼԻ
ԹԻԱՌԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ

(Մեր մասնաւոր թղթակցէն)
— () օ օ —

Սեպտ. 3, 1904

Մի ամբողջ տարի անցաւ մեր
եկեղեցիներէ կարածներէ ա-
ւազակային իւրացման օրից :
Շատ բաների է դիմացել հայ
ժողովրդի հաստատակնդ մէջբը .
Իրան էլ դիմացաւ :
Բայց որքան էլ որ հայերն
համբերութեան բաժակը մեծ լի-
նի, որքան էլ նա ովկիանաչափ
ծաւալ ունենայ, կրկին լեցեց :
Փակեցին մեր դպրոցները,
բարեգործական, հրատարակչա-
կան, մարզասիրական ընկերու-
թիւնները . ճնշեցին, կրճատե-
ցին մեր մամուլը . մնացած թեր-
թերին էլ գրին թոթովախօս
ստրկի, ապուշի դերուժ . փակե-
ցին մեր առաջ պետական պաշ-
տօնների ասպարէզը . նոյնիսկ
դասատու թիւները... խեղդեցին .
ճզմեցին մեզ : Վերջապէս խլե-
ցին այն եկեղեցու կարածները,
որի պատերի մէջ ամէն տօն ու

կիրակի օր շնական հնազանդու-
թեան պղծաբարի ազօթքներ ու քա-
րոջներ են հնչում Նիքոլա Բ.
կայրարի, նրա զաւակների, կը-
նսլ . զօրքի ու բռնակալութեան
մեքենայէ ամէն մասերի համար :
Փակեցին ամէն ինչ, խլեցին,
առան, տարան ամէն բան .
Երբ մեզ այլեւս «ոչինչ չմնաց
կորցնելու», այն ժամանակ առ-
պարէզ եկաւ անկողնուպոյնի :
Կրկին բարձրացրեց, ծառայա-
բողոքի աստուածային զգացմուն-
քը :
Բողոք ու վրէժ ձեռք ձեռքի
ուրին մեր՝ կովկասահայերիս մէջ :
Մաքրել մեր հասարակութիւնը
որոշներէրից—իւրաճան մասնիչ
սողուններից՝ և վրէժ լուծել հա-
յակեր պաշտօնեաներից . և հա-
այդ եղաւ մեր նշանաբանը :
Ու սկսեց :
Եկեղեցական կալուածների գը-
րաւման խառնաշփոթ պահուն
ամենից առաջ օրինակը տեւց
Ալեքսանդրապոլը :
Սենեակի մէջ դաշոյնով խոլ-
խոլեցին հային հացսկից, նը-
րան բաժակակից . բայց դառածան,
սղուհաց մոռացող յոյն քահա-
նային :
Շնորհիւ ողորմած ցարի և կի-
սախելագար Գալիցիին՝ ահաբե-
կիչներն ազատ են և հանցիտ
խղճով, աւելի հանգիտ, քան
մարդն «սկզբնական մեղքից» ա-
ռաջ :
Հազիւ մի քանի օր անցած .

նոյն քաղաքում փոշու մէջ գլոր-
ւեց մի հայ մատնիչ, լրտես սո-
տիկան :
«Հող էիր և աղբ դարձիս»,
եղբայրն նրա գերեզմանի վրայ :
Ահարկիչներն ազատ են երկ-
նից թաշունների նման :
Եւ այնուհետեւ աճեցին սպա-
նութիւնները : Վրէժի մատուած
գաշոյնն ու գնդակը գործեցին :
Կարուժ գլորեցին Հաշիմ բե-
կի սրդուն, որ լուրեր էր տալիս
թուրք հիւպատոսին : Նրանից մի
քանի օր շանցած՝ նորից մի
մատնիչ ստիկանի... իսկ սրա-
նից հազիւ 20 օր առաջ թաւալ-
ւեց ժանտաբժնների թարգման
Կրօզովը :
Գանձակում անցեալ այնանը
գնդակահար եղաւ տխրահոգ
հայ մատնիչ ստիկան Սէրգին :
Սրանից երկու ամիս առաջ նա-
հանգապետի օգնականի «խեթ-
խարաբը» մեզ բերեց հեռագիրը :
Իսկ ներքինի հրէշի սպանու-
թիւնն էր : Վերջին օրերս նոյն
Գանձակի ամառանոց Հաշիմ բե-
կում թիւրք օրտիկան Ալին գըն-
դակահար եղաւ, մի սպիտա-
(աւագ ստիկան) և մի սպայ թե-
թեւ վէրքեր ստացան :
Վաղարշապատում սպանեցին
գիւղական Սարգիս Փոթեյանին,
երեւանում երկու սողոր լրտեսնե-
ներին, Հին Նախիջեւանում կուղ-
նեցով մի ռուս լրտեսի, Ղազա-
խի գաւառի անտառում, Ալաթա-
խից մէքիչ հեռու, գնդակա-

հար արին մի հայակեր անտա-
ռայտի...
Իսկ այդ բոլորի գլուխ գործոց
եղաւ Իգորուժ Սուրմալուի գա-
ւառի բարենու, հաշակաւոր հա-
յակեր Բոգոսլուսկուն ստակեց-
նելը :
Ինչ չեմ հաշում Գալիցիինի,
երկրի կառավարչապետի սպա-
նութեան անյաջող փորձը և ու-
րիչ բազմաթիւ այլ անյաջող ձեռ-
նարկներ, ինչպէս Էլմիածնի
գաւառապետ Շմեռլինգի, Ղար-
սի և այլ անդերի բազմաթիւ
փորձերը :
Եւ այս ամէնը մի տարում :
Ընթերցող, հանճարեղ ձեռ-
սու կառավարիչներն ու պաշ-
տօնեաները . ստրուկ հայից եր-
րանք վրէժխնդիր լեղափոխա-
կաններ պատրաստեցին խեղճ ու
կրակ 4 5 տարում : Մի այնպիսի
փուշ ստեղծեցին նրանք կովկա-
սում, որին կլլելու համար շատ
փոքր է Նիքոլա ցարի որկորը :
ՌԱՐԱ-ԳԱՍՊԱՐ
«Հայրենիք»
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՆԻԿ

Վառնայի ազգատախնամ ըն-
կերութեան Գործադիր ժողովը
խնդրում է մեզ հրատարակել հե-
տեւեալը :
Գործադիր ժողովս յանուն ազ-
գատաց կուգայ իր խորին շնոր-

ԻՆՏԻՆԵՐԸ (5)

(Պատկեր Բաբուի կեանքից)

Մի քանի վայրկեան լուսթիւնից
յետոյ, Սեթրակովը երբ նկատեց թէ
բոլորը իրեն են դիտում, մանաւանդ
ձեռքը, որի մէջ ճկւղիւծ սեղանովի
էր թղթադրամների կոյտը, իսկոյն զը-
րամը ծոցի գրպանը դրեց ու դառ-
նալով բոլորին ստեց :
— Ի՞նչ էք այդպէս ապուշ կարած
անտրում ինձ . առաջին անգամը չէ
որ ինձ տեսնում էք, կարծեմ . հեր-
օրհնածներ, մի չը թողիք էլ որ նը-
տեմ . ես եկայ գոնէ մի ժամ, և
վերջին ժամը ձեզ հետ անցկացնեմ,
դուք էլ այդպէս էք վարվում :
— Ի՞նչպէս ենք վարվում, միջա-
տեց Սարգիսովը . էլ ի՞նչ ես ուզում,
մտ երեք հազար ռուբլի նէր ստա-
ցար, ո՞ւր կարող էիր այսպէս սիրով
ու պատուով ընդունել :
— Այո, շատ սիրով իսկապէս, նը-
կատեց Իւլիա Իվանովնան : Բայց ես
չեմ հասկանում թէ ինչ է կատար-
վում այստեղ . Բարութովը ի՞նչի է
այդքան դրամը քեզ ներում . ձեռ-
բիտ, շատ զարմանալի է, դուք նը-
էրի կարօտ մարդ չէք . փառաւոր
պաշտօնով ինձինք էիք : Այսօր լը-
տեցի որ այդ պաշտօնը թողնում էք .
ուրեմն աւելի հարուստ պաշտօն էք
գտել և աւելի մեծ եկամուտ պէտք
է ունենաք : Սիւքս բան չէ կարում
որ...
— Ի՞նչ նէր, մէջ ընկաւ Բարու-

թովը . ձեռք առնել ուղեցի մի քիչ
պարծենալ, ո՞վ է գտել որ այդքան
գուժաւոր ուրիշին ներիք : Սեթրա-
կովին երեք հազար ռուբլի պարտք
էի, նա դիտմամբ ցերեկը ինձ չէր
հանդիպել, որպէս զի ես չը նեղվեմ .
գիտէր որ պատրաստի դրամ չունէի .
նրա բախտիցը ես էլ այսօր բաւական
կրեցի, ու ահա ձեր ներկայու-
թեանն էլ վճարեցի . կարծեմ գոհ
ե՞ս, չէ՞ Սեթրակով, ճամբորդ մար-
դը, մանաւանդ օտար տեղ գնացողը
դրամի պէտք չստ կունենայ . դէ,
գնա՛ քե՛ք քաւ . չասեա թէ Բարու-
թովը լաւ ընկեր չէր . եթէ ուրիշ
լաւ բան անել չը գիտեմ . գոնէ դը-
րամական պարտքս կը վճարեմ . Ու
րեմն հարուստ գնում ես էլի :
— Այո, այո, վաղը անպատճառ
գնում եմ :
— Ես էլ քեզ պարտական եմ Սեթ-
րակով . 1500 ռուբլի . քանի որ էլ
չենք տեսնվելու, առ, ես էլ եմ վը-
ճարում :
Սարգիսովն էլ իր պատրիք վճարեց :
— Զարմանալի բան, ճշմարիտ շատ
չարմանալի, իր թափանցող աչքերը
բոլոր ներկայ եղողներին աչքերին
ուղղելով թոթովեց Իւլիա Իվանով-
նա :
— Ծճմարիտ, այստեղ մի հանելուկ
կայ . դուք ինձինք իրողութիւնը
թաղանթում էք . ես չեմ հաւատում, որ
Սեթրակովը ձեզինք այդքան առնե-
լիք ունենար :
— Ոչ մի բան չունենք թաղանթիք .
մերկ ճշմարտութիւնն է այն, զարմա-
նալի էլ ոչինչ չկայ, մարդին պար-

տական ենք . նա Բաքուից հեռանում
է եւ գուցէ այլեւս չը վերադառնայ,
բայց չէ ուղեցել մեզ նեղը գնել, և
գիտմամբ այսպիսի մի ժամանակ է
եկել որ մենք ժամանակ չունենանք
իրեն վճարելու մասին խօսել . եւ չը
պէտք է խօսելիք, եթէ տարած չը
լինէինք, տարված պարագային, որ-
տեղից պէտք է վճարէինք : Եւ վեր-
ջապէս եթէ գողտնիք էլ լինի, երբ
որ չէ բացվում այդ գաղտնիքը, էլ
հետաքրքրվելու պէտք չկայ . բայց,
թանկագին Իւլիա Իվանովնա, դուք
ձեր ձեռին յատուկ բնութեամբը շա-
րունակում էք հետաքրքրվել . այն-
պէս չէ, կատակելով վերջացրեց Բա-
րութովը :
— Լաւ, ճիշտ է, բայց չէք էլ ա-
սում թէ Սեթրակովը ո՞ւր է գընում,
այդ է՞լ գաղտնիք է :
— Այդ արդէն իրեն գործն է վրա
բերեց Սարգիսովը :
— Այո, հիմա ձեզ եմ հարցնում,
Սեթրակով, դուք ո՞ւր էք գնում և
ի՞նչպէս եղաւ որ այդպէս յանկար-
ծակի որոշեցիք հեռանալ Բաքուից :
— Աստուած սիրէք, Իւլիա Իվանով-
նա, նախ մտենանք հացասեղանին,
ես չափազանց սոված եմ . Սեղանի
վրա կը պատասխանեմ :
— Այո, այո, շատ լաւ է ասում
Սեթրակովը . տղերք, սեղանի մաս,
բոլորս միասին Սեթրակովի կենացը
խմենք :
Ամէնքն էլ մօտեցան սեղանին,
բաժակները լցվեցին, Սարգիսովը
վերցրեց բաժակը եւ լուրջ կերպա-
րանք ընդունելով, խօսքը ուղղեց

Սեթրակովին .
— Ընկեր, բայց ոչ այսօրվան ու
վաղվան ընկեր, որովհետեւ այսօր-
վանից մենք բաժանվում ենք, այլ
անցեալի ընկեր . խմում եմ քո կե-
նացը . մենք միմեանց հետ շատ տա-
րիներ ենք անցրել, գիմնադրվում,
բարձրագոյն դպրոցում եւ այս քար-
ու ջանդ, մարդին ատող քաղաքում,
որը ինչպէս երեւում է միայն քեզ
չը կարողացաւ բողոքովին կուլ տալ,
իր հրապուրիչ բերանի բայր թով-
չութեամբը միասին, դրան ապացոյ-
ցը կարող է լինել այն, որ դու հե-
ռանում ես այստեղից : Գնա՛, բարձ-
ճանապարհ եւ յաջողութիւն . գնա՛,
վիճէ . չեմ կարող գալ, բայց իմ հո-
գին քեզ ընկերս, գնա և գործնա-
կանապէս ապացուցիր, թէ կարգին
մարդը ուր որ լինի միշտ մարդ կը
մնայ, միշտ հոգու բարձր թախիճեր
կունենայ, միշտ մեծ ու դժուարին
ձգտումներին եւ զգացումներին ար-
ձագանքող կը լինի :
— Կեցցէ Սեթրակովը, կեցցէ Սեթ-
րակովը, գոչեցին ամէնքը և մօտե-
ցան համբուրելու զգածված ինձի-
ներին :
— Աստուածն անգամ չէ կարող հա-
կանալ թէ ինչ է կատարվում այս-
տեղ, թէ ի տակից փնթփնթաց Իւլիա
Իվանովնան : Մենք թուղթ խաղալու
եւ զրուարճանալու եկանք, այստեղ
ողջերթի խնճոյք կայ :
ՎԵՐՁ
ՎԱՐՊՈ

հակախորհրդային ինտրոգ հան-
գուցեալ Տիար Արսէն Էսափաշա-
եանի որ իր վերջին վարկերին
չէ մոռցած նաեւ 100 ֆրանքի
գումար մը կտակել քաղաքիս
թշուառ աղքատաց բաժնուելու
համար:

Ժողովս ալ վերոյիշեալ կտակի
համաձայն նոյն գումարը բաժնած
է արժանաւոր աղքատաց:

Գործ. Ժողով
(Կնիք)

— Հրատարակելով անփոփոխ
Պ. Խաչ. Ատեփանեանի յօդուածը,
յայտնում ենք, որ պարոնը այդ
տեսակ յօդուածներ ուղարկել է և
«Իրաւունք» ու «Ձայն Հայրեն-
եաց» խմբագրութիւններին,
բայց անոնք չեն հրատարակել:
Այդ յօդուածից երեւում է, որ
անտարբեր ոչ կուսակցականները
նոյնիսկ զգում են վերեւը յիշ-
ուած խմբագրութիւններէ, ո.
րոնք բացի լայրի հայհոյանքնե-
րից և անտրամաբան ու անհետե-
ւողական քննադատութիւններից
ոչնչով օգնութեան չեկան այս
նեղ պարագաներում դժբախտ
հայկական խնդրին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԼԻԱՆԱՆ ԹԵՐԱԿՂԻ

Սարսիկում հիմնել է ժան-
դարմերիտի վարժարան՝ Մակե-
դոնիայի համար ժանդարմներ
պատրաստելու: Այդ վարժարա-
նում բուլղարներին չեն ընդու-
նում, չնայելով որ ազգաբնակու-
թեան մեծ տոկոսը կազմում են
գործ և ամենից շատ սուժող-
ներն են:

— Սերբիայի և Բուլղարիայի
յարաբերութիւնները լարուած
են, ինչպէս ասում են սերբիա-
կան Պետեր Թադաուրը չէ գայ Սօ-
ֆիա՝ հակառակ իր խոստման:
Պատճառը Սերբիական և Բուլղա-
րական խմբերի ընդհարումն է
Մակեդոնիայում: Սերբիական
թերթերը վերագրում են Բուլղա-
րական կառավարութեանը, և ըո-
ղքելու համար Բեյլգրատում մի-
աինք պէտք է կազմեն:

— Իտալիան մտադիր է մօտիկ
ապագայում վեհաժողովի հրաւի-
րել Հռոմում Արեւելեան հարցի
համար: Ժողովը չպէտք է զբաղ-
ւի հեռաւոր արեւելքի խնդրով:
Մի քանի պետութիւններից հա-
մաձայնութիւն արդէն առել է:
Սուլթանը նոյնպէս համաձայնել
է, որովհետեւ հաւատացած է որ
իւր գերիշխանութեանը չեն
կայնի:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄ

— Մարտումի անցեալ թւով
զնք տիրեք կուրպակիին հը-

րամանը՝ ուղած զօրքին առաջխա-
ղացութեան համար: Եւրոպական
լրագիրները շատ թերեւէ մ
կարծիքներ յայտնեցին: Ռուսաց
լրագիրները, ի հարկէ մեծ ոգե-
ւորութեամբ ողջունեցին կուր-
պակիին այդ քայլը: Այդ ոգե-
ւորութեան մէջ, պէտք է առել,
չկայ նախկին պոռոտախօսութիւն:
Նկատում է, որ այնքան էլ հա-
ւատով չեն վերաբերում իրանց
զօրքին, թէեւ հայհոյում են այն
Եւրոպական, մասնաւորապէս Անգ-
լիական թերթերին, որոնք հա-
մարձակուում են քննադատել կու-
րպակիին քայլը և գտնում են
անժամանակ և մեծ սխալ նորա
կողմից: «Նոյսօյլ Վրիժի» աս-
տական թերթը նոյա քննադա-
տութիւնը վերագրում է առատե-
ցութեան: Ներքեւ բերած պա-
տերազմից տեղեկութիւնները
ցոյց են տալիս թէ ո՞վքեր են
առատեացները:

Վրէննա 2 հոկտ.— Բեթերս-
պուրկէն կը տեղեկացնեն «Բրէս»
թերթին հետեւեալը.

Եանթայի ճակատամարտի բերք
մասերու վրայ տեղի ունեցած է:
Թայնէ գետի վրայ Պէնչիքու մօտ,
Եանթայի Մինաներու և Խունթո
գետի վրայ Չոնթայի մօտ: Մի-
նաներու կեղծումով ժինչեւ
այսօր զգալի անյաջողութեանց
մատնուած է, որուն իսկական
պատճառը կը նկատուի որս հե-
տեակ զօրաց հին ձեւով յարձա-
կումը: հակառակ Տրախմիրովի
ուզողութեան: Իսկ «Աթիլօֆ» ան-
ուանուած արագաւար ձիազական
սիսթէմով ուսուցող կը պրազան-
ցեն ճարտանցոց:

Չորապար կրիպերի որդին
վիրաւորուած է և մահամբձ վի-
ճակի մէջ կը գտնուի: հայրը յու-
սահատած է:

— Լոնտոն 2 հոկտ. «Տէլլի թէ-
լէկրաֆ»-ին կը հաղորդուի թէ,
երկու օրէ ի վեր ձօնքաներուն
Բօրթ-Սթրիտ անցնելը դադարած
է: ճարտանցիք մեծ եռանդով կը
յարձակին Իօ. շաի վրայ:

— Բեթերսպուրկ 2 հոկտ —
Չորապար Գուրբաթիին հետեւ-
եալը կը տեղեկագրէ. Սեպտ. 6-
րեսունին կէս օրէն առաջ ձախա-
կողման 2 վաշտեր զգալի փնա-
ներու ենթարկուելով եւ մղուած
են, պատերազմադաշտին վրայ
թողելով իրենց թնդանօթները:
Ռմբաձիգ զօրաց հրամանատարը,
վիրաւորուած է, իսկ վաշտի մը
հրամանատարը մեռած: Ռուսնե-
րը իրենց կորսնցուցած թնդա-
նօթները ձեռք անցուցած են,
միայն 16 հատը ճարտանցոց
թողլով:

Սոյն ճակատամարտը շատ ան-
յաջող ելք ունեցեր է, ճարտանց-
ոց գիշեր ատեն յարձակած ըլ-
լալուն համար:

Մենք կորսնցուցած ենք թէ

մեր դիրքը և թէ ետ առնուած
թնդանօթները:

— Լոնտոն 2 հոկտ.— Բէյթի-
րի գործակալութիւնը Իօ. քիօյէն
կիմանայ, թէ սեպտ. 30ին կէս
օրէն վերջը շարունակ ճարտանց-
ոց յաջողութեանց լուրերը կը
հասնին:

Չորապար Գուրի աջակողման
Ֆլանկը 25 ուսական թնդանօթ-
ներ գրաւած է իսկ ուսերը պա-
րապ տեղ ճիգի կը թափեն յար-
ձակելու:

— Բեթերսպուրկ 2 հոկտ.—
Իշխան Թորէցիայ պատերազմը
և պերօքրաթիան յառաջարա-
նով միջոցաւ հրատարակած է,
որուն մէջ կը յայտնուի թէ պատե-
րազմին այս անյաջողութիւննե-
րը անպատրաստականութենէ յա-
ռաջ եկած են և ասոր համար
պատասխանատու է Պրօքրա-
թիան:

— Վրէննա 2 հոկտ.— Թօքթո-
յէն եկած լուրերը կը հաստատեն
թէ ըստ հեռագրի Չորապար Օ-
եամայի, պատերազմը կը շարու-
նակուի ճարտանցոց համար մե-
նայաջող կերպով: Թօքթոյի մէջ
կիրակի օրուէն ի վեր առատաց
կրած փնտները կը հաշուին 37
հազար հօգի, որոց 1/3 ընկած է
միայն երկուշաբթի օրուան ճա-
կատամարտերուն մէջ: Խարպիին
մէջ 12000 վիրաւորակներ ըն-
գունելու պատրաստութիւնը կը
տեսնուի:

— Լոնտոն 2 հոկտ.— Ճարտա-
ցոց գլխաւոր բանակաւորէն կի-
մացնեն թէ ճարտանակ աջա-
կողման թեր սեպտ. 30ին ա-
մենաստիկ կերպով սկսեր է
հալածել ուսներուն կեղծները
(Նօտզու), կը յուսայ թէ այսօր
պիտի կարենայ գրաւել ուսաց
գիրքը Թունչանքոյի մօտ: Օրու-
յի աջակողման թեր գրաւած է
4, և ձախկղմանը 21 թնդա-
նօթներ: Նահանջող ուս Չորքե-
րը մեծ փնտներու ենթարկուած
են՝ ճարտանակի ուժաւորներէն:

— Լոնտոն 3 հոկտ.— Մարեշալ
Օեամայի տեղեկագրութեան հա-
մաձայն, պատերազմը կը շարու-
նակուի, և ուսները ետ կը քըշ-
ուին:

Գուրբաթիին վճռականապէս
պառակտումը ակնհայտ է, և Օ-
եաման կը թուէ նորա փնտները
30000 հօգի:

— Լոնտ. 3 հոկտ. Սեպտեմբեր
30ին Փոլուարէն եկած լուրերուն
համաձայն, Օրուին երեկուան
տարած յաջողակ կանխատե-
տուածէն աւելի յաջող կը ներկա-
յացնեն, ճարտանցիք 27 թնդա-
նօթներ գրաւած են, և իրենց
փնտները բազմաթիւ Ռուսնե-
րուն շատ քիչ են. գեռ շարու-
նակարար կը յարձակին:

— Վրէննա—Լոնտոնէ կը հե-
ռագրեն Ն. Բ. Թ., որ շատ մը

չօրապարներ իրեն բանակին
գլուխը մեռած են, կուրա-
պակիներ յամառած է միջնե-
իսկ այն վայր ետին երբ շրպ-
նել ուսմբերու կախը սկսած է:

— Լոնտոն—Տօկիօէն կը հե-
ռագրեն թէ ճարտանակ աջ թե-
ր և կեղծողի կախները արդէն
վերջացած են. ձախ թերը գեռ
կը շարունակէ: Սեպտ. 27ին
միջնեւ 1 հոկտ. ճարտանակ աջ ձախ
թերը կորսնցուցած է 3500 հա-
գի:

— Բեթերսպուրկ 2 հոկտ.—
Փետերսպուրկէն կը հեռագրեն.
կուրպակիին կը վերադարձէ կեղծողը. նա
անձամբ կառաջնորդէր Պետրով-
կի գունդը:

— Լոնտ. Տօկիօէն կը հեռագ-
րեն. նախընթաց երեկոյին,
աւսի 3ին, ճարտանակ աջ թերը
հասած է միջնեւ Եախօ գետը,
ուր խիստ դիմադրութեան հան-
գիլած է. նոյն տեղւոյ գիրքը
պաշտպանող ուս Չորապարի
խիստ ճակատամարտէն վերջը
ստիպեալ պարպեց զայն. կէս օ-
րէն վերջը թէեւ ուսերը կրկին
յարձակեցան, սակայն յետ մը-
ղունցան:

— Լոնտ.— Մուկտենէ կը հե-
ռագրեն, թէ հին կիմացուր
թնդանօթներու ուժեղ գոռալը
Չիւսարներու անձնագահութիւնը
սարսնցուցիչ էր. ընդհանուր
տեսութեամբ Չորքը սաստիկ յոգ-
նած է. ուսուսը անբաւական է
Իէպի Մուկտենէ վերադարձող
ուս զինուորներու պատճառաւ
ճարտանակը աներթեւեկ կիւր-
ձարնակուն ուսմբերէն վիրա-
ւորուած բարձրաստիճան ուս
սպաները բոլորը մեռան: կու-
րպակիին անչափ եռանդ և քա-
ջութիւն ցոյց կուտար նոյնիսկ
ամենախիստ կրակի մէջ: 3ին
ուսերը առանց կուր նահանջե-
լին:

— Լոնտ. Տօկիօէն կը հեռագ-
րեն, թէ Միկադոն շնորհակալու-
թեան հեռագիր ուղղած է իր
չօրքին նորա քաջութեան և գոր-
ծերի յաջողութեան համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղբ. Ընկ. Ընդհանուր Ժողով
տեղի պիտի ունենայ յառաջիկայի
րակի 2-ին Աղբ. վարժարանի մէջ:

Կը խնդրենք պատուարժան անդա-
մներէ փութայ ներկայ գտնուիլ կա-
րուր ինչպէս մը որոշումը սարու
համար և ընդհանուր հաշուետու-
թեան և Գործադիր Ժողովոյ նոր
ընտրութեան:

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Վ. Ատենադպրի Վ. Ատենապետի
Պ. Քիւրֆանի Մ. Գարագաշեան
(Կնիք)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность» Варна